որ նա այնտեղ չը հասած նորա մօտ եկաւ Զավ-
ղանի իշխանը եւ խաղաղութիւն հաստատեց նորա
հետ։ Իյադ այստեղից անցաւ Արզն եւ նուաճեց
քաղաքը, մտաւ ապա կիրճը, դուրս ելաւ այն-
տեղից (դիմելով) դէպի Թիֆլիս, եկաւ Խլաթ,
որի իշխանը խաղաղութիւն կապեց նորա հետ, եւ
հասաւ մինչեւ Հայաստանի Աղի Ջրերը։ Վերա-
դառնալով Թաքքայ նա գնաց Հիմս եւ այնտեղ
մեռաւ 20 թ.։

25 թ. Օսման դրեց Վալիդ (ի Օքբային)
Կուֆայի վերայ կառավարիչ, իսկ Օտբայ ի. Գար-
քադին յետ կոչեց Ատրպատականից։ Որովհետեւ
այս երկրի բնակիչք խղեցին խաղաղութեան պայ-
մանները, Վալիդ յարձակեցաւ նոցա վերայ 25 թ.։
Առաջապահ զօրքի հրամանատար նշանակելով
Աբդուլլահ ի. Շուբայլ Ահմասիին, նա ուղարկեց
նորան ասպատակելու Մուղան, Թաբար[1] եւ Թայլա-
սան[2]. Աբդուլլահ յաղթեց, աւարի առաւ եւ
դերեց. այն ժամանակ Ատրպատականի ժողո-
վուրդը խնդրեց խաղաղութիւն, եւ Վալիդ ստա-
ցաւ՝ Հուզայֆայի շնորհած խաղաղութեան պայ-
մաններին համաձայն[3] 800.000 դրամ։

Դորանից յետոյ Վալիդ ուղարկեց Սալման
ի. Ռաբիայ Բահլիին Հայաստանի բնակիչների
դէմ 12.000 զօրքով, որ ասպատակեց, սպանեց,
գերեց եւ վերադարձաւ Վալիդի մօտ՝ հարուստ
աւարով։ Վերջինս՝ նոյնպէս յաղթութեամբ եւ
աւարառութեամբ վերադարձած լինելով՝ դիմեց
դէպի Մոսուլ եւ բանակեցաւ Հադիդայում[4]. այս-

---

1 Jakuṭ ունի՝ Մուղան, Տաբրիզ التبريز եւ
Թայլասան։

2 Jakuṭ կ'անուանէ խազարաց երկրի մօտ։

3 Ըստ Տաբարիի այս պայմանագրութիւնը տեղի
ունեցաւ 22 թ.։

4 Jakuṭ կ'անուանէ փոքր քաղաք Տիգրիսի վերայ,
Զաբ գետին մօտ։